ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.10.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ԱՄ-2018/152

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.10.2018թ. թիվ 01.1/26-3/18305-18 գրությամբ Վասպուր Ասատրյան Ֆ/Ա-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 02.10.2018թ. թիվ ԴՎԱ/3752 գրության հիման վրա, 09.10.2018թ. թիվ 01.1/26-3/18305-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել Վասպուր Ասատրյան Ֆ/Ա-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>Վասպուր Ասատրյան Ֆ/Ա-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Վասպուր Ասատրյան Ֆ/Ա-ն պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 17.10.2018թ. ժամը 10:50-ին և 19.10.2018թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստերի վերաբերյալ չի ապահովել իր մասնակցությունը:

Միաժամանակ արձանագրում եմ, որ Վասպուր Ասատրյան Ֆ/Ա-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

3. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 02.10.2018թ. թիվ ԴՎԱ/3752 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/36» ծածկագրով ընթացակարգի հաղթող մասնակից Վասպուր Ասատրյան Ֆ/Ա-ին 30.08.2018թ. armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով ուղարկվել է պայմանագիր կնքելու առաջարկ: Սահմանված ժամկետում (15 աշխատանքային օր) մասանակիցը չի ներկայացել պայմանագրի կնքման համար:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/36» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասիին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերությունը և Կարգի 45-րդ կետը, որոշեց Վասպուր Ասատրյան Ֆ/Ա-ի հայտը մերժել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 17.10.2018թ. ժամը 10:50-ին և 19.10.2018թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստերի վերաբերյալ չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/152 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2018/152 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բանջարեղենի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/36» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել Վասպուր Ասատրյան Ֆ/Ա-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.08.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 2-րդ կետով կայացված որոշմամբ Վասպուր Ասատրյան Ֆ/Ա-ն ճանաչվել է ընտրված մասնակից և որոշվել է անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

3. Պատվիրատուն 30.08.2018թ. Վասպուր Ասատրյան Ֆ/Ա-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով ուղարկել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/36» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ ծանոթանալու և հրավերով սահմանված ժամկետում և կարգով կնքելու նպատակով:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.09.2018թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 7 արձանագրությամբ արձանագրվել է, որ Վասպուր Ասատրյան Ֆ/Ա-ն սահմանված ժամկետում (15 աշխատանքային օր) չի ներկայացել պայմանագրի կնքման համար:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.10.2018թ. թիվ 01.1/26-3/18305-18 գրությունը, ՀՀ

պաշտպանության նախարարության 02.10.2018թ. թիվ ԴՎԱ/3752 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 13-րդ և 14-րդ ենթակետերի համաձայն՝

13) ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը.

14) ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բանջարեղենի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/36» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել Վասպուր Ասատրյան Ֆ/Ա-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.08.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 2-րդ կետով կայացված որոշմամբ Վասպուր Ասատրյան Ֆ/Ա-ն ճանաչվել է ընտրված մասնակից և որոշվել է անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Պատվիրատուն 30.08.2018թ. Վասպուր Ասատրյան Ֆ/Ա-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով ուղարկել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/36» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ ծանոթանալու և հրավերով սահմանված ժամկետում և կարգով կնքելու նպատակով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.09.2018թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 7 արձանագրությամբ արձանագրվել է, որ Վասպուր Ասատրյան Ֆ/Ա-ն սահմանված ժամկետում (15 աշխատանքային օր) չի ներկայացել պայմանագրի կնքման համար:

Հրավերի ՄԱՍ Ի-ի 8-րդ կետի 8.5-րդ ենթակետով նախատեսվել է, որ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Միաժամանակ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝*** 10 աշխատանքային օրվա ընթացքում, ***չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:***

Այսպիսով, արձանագրում եմ, որ Վասպուր Ասատրյան Ֆ/Ա-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:***

Վերոգրյալով պայմանավորված, գտնում եմ, որ «Վասպուր Ասատրյան Ֆ/Ա-ն հրաժարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/36» ծածկագրով պայմանագիրը կնքելուց և թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ վերջինս սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի ապահովումը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.10.2018թ. թիվ 01.1/26-3/18305-18 գրությամբ Վասպուր Ասատրյան Ֆ/Ա-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Վասպուր Ասատրյան Ֆ/Ա-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ